



## ԴԱՐԱՆԱԿԱԼՈՒՄ ՓՈՔՐ ՈՒԺԵՐՈՎ

Ռազմական գործում կան մեծ թվով հնարքներ, որոնցից մեկը գործնականում օգտագործելի է հակառակորդի նկատմամբ առավելություն ստանալու համար՝ նախապես հակառակորդի առաջխաղացման ուղիներում մարտիկների գաղտնի տեղակայման շնորհիվ: Խոսքը դարանակալման մասին է, որը կիրառվում է անակնկալ հարձակման նպատակով:

«Փոքր ուժերով դարանակալում» տերմինը վերաբերում է հակառակորդի փոքր քանակի մեքենաների կամ 10 հոգուց պակաս ստորաբաժանումների վրա հարձակվելուն: Փոքր ուժերով դարանակալումը նախ և առաջ որոշվում է առաջխաղացման և տեղում դիրքավորման փուլում նրա գործողությունների գաղտնիության, ինչպես նաև դարանակալման ենթական թիրախի բնույթի նկատառումով:

## **Փոքր ուժերով դարանակալում կազմակերպելու ընդհանուր առաջարկություններ**

1. Հակառակորդի ուղղությամբ կրակային ազդեցության սկզբում անհրաժեշտ է առկա բոլոր կրակային միջոցներով, առավելագույն խտությամբ, նշանառու կրակի միաժամանակյա բացում:
2. Հակառակորդի ուղղությամբ կրակեք այնքան ժամանակ, քանի դեռ նա ամբողջությամբ չի ոչնչացվել կամ դուրս չի եկել ձեր զենքի արդյունավետ կրակի գոտուց: Եթե հակառակը տեսադաշտում չէ, ապա անհրաժեշտ է ենթափողային նոնականետերից կրակ վարել նրա հավանական նահանջի ուղղությամբ:
3. Անհրաժեշտ է խմբի մարտակարգի գրագետ շարակարգում և անձնակազմի գործողությունների համակարգում:
4. Անհրաժեշտ է հանգամանորեն պատրաստել դարանը՝ ձեր կերպարանքները չպետք է զժագրվեն երկնքի ֆոնին, մաքրեք դիտարկման հատվածը՝ չխախտելով տեղանքի բնական տեսքը: Անհրաժեշտության դեպքում պատրաստեք կրակային թաքստոցներ (փորեք ապաստարաններ ծնկաց, նստած, պռոկած դիրքից կրակելու համար):

## **Դարանակալման գործողությունների կազմակերպման անմիջական կարգը**

1. Հստակ պարզաբանեք առաջադրանքը և գործողությունների կարգը.
  - դարանման նպատակը և հակառակորդի օբյեկտը,
  - ձեր տեղը մարտակարգում,
  - դարանում գործողությունների կարգը՝ հակառակորդի հայտնաբերման դեպքում տրվում է «պատրաստվել» հրամանը, կրակ բացելու ազդանշանը՝ «կրակ» հրամանը կամ ֆուգասի, ականի պայթեցումը, կամ դիպուկահար հրացանից կրակելը (ազդանշանը սահմանում է հրամանատարը): Կրակի դադարեցման դեպքում տրվում է «թողնել», «դադարեցնել կրակը» կամ որևէ այլ հրաման (սահմանում է հրամանատարը):
  - արտակարգ իրավիճակներում գործողությունների կարգը (հակառակորդի կողմից դարանը հայտնաբերելիս, հակադարանային մանևր կատարելիս և նրա կողմից դարանակալող խումբը արգելափակելիս):
2. Գաղտնի զբաղեցնել կրակային դիրք, անհրաժեշտության դեպքում քողարկել այն:
3. Նշել նահանջի վայրերը կամ պահեստային կրակային դիրքերի տեղերը:
4. Կահավորեք կրակային դիրքը.
  - պատրաստեք զինամթերքը հրաձգության համար (առջևում դրեք ձեռքի նոնակները, պահեստատուփերը, ենթափողային նոնականետի նոնակները, բացեք նոնակների և պահեստատուների պայուսակների փականները):
  - համոզվեք, որ կրակային դիրքը հուսալիորեն քողարկված է:
5. Ուշադիր հսկեք դարանակալման շրջապատող տարածքը:
6. Անմիջապես կրակ բացելու համար «Ուշադրություն» հրամանով զենքը բերեք մարտական կիրառման վիճակի.
  - հանեք պահպանակից,

- ուղղեք թիրախին,
  - մատը դրեք ձգանի վրա,
  - ձեռքի բեկորային նոնակը նետելիս՝ հանեք նոնակի ճուլկիի պահպանակը:
7. Կրակ բացելու ազդանշանի կամ «Կրակ» հրամանի դեպքում անմիջապես կրակեք (պայթեցրեք ֆուգասը կամ ականը): Ամբողջ խմբի կողմից թիրախին միաժամանակյա նշանատու կրակելը կարևոր պայման է դարանակալման համար:
8. Հակառակորդին կրակային խոցման ժամանակ.
- բացեք կենտրոնացված կրակ հրաձգային զինատեսակներից հակառակորդի գլխամասային խմբի, մեքենայի (հիմնականում խցիկում գտնվող վարորդի) ուղղությամբ երկար կրակահերթերով (յուրաքանչյուրը 5-8 կրակոց)՝ կրակահերթերի նվազագույն ընդմիջումներով,
  - այնուհետև նշանատու կրակ վարել կարճ կրակահերթերով (2-3 կրակոց)՝ դրանք հաջորդաբար փոխարինելով ենթափողային նոնականետի կրակոցներով: Կրակային ռեժիմը հետևյալն է՝ 3 կարճ կրակահերթ, մեկ կրակոց ենթափողային նոնականետից,
  - երբ հակառակորդը կրակում է ձեր ուղղությամբ, փոխեք ձեր կրակային դիրքը,
  - կրակով պաշտպանեք ընկերների տարաշարժը,
  - հստակ և արագ կատարեք խմբի հրամանատարի բոլոր հրամանները,
  - անմիջապես դադարեցրեք կրակը նախապես հաստատված ազդանշանով կամ հրամանով և վերահսկեք այդ հրամանի կատարումը ձեր ընկերների կողմից,
  - անհրաժեշտության դեպքում ձայնով կամ այլ միջոցներով (ձեռքի ափով հարվածելով) կրկնօրինակեք կրակի դադարեցման հրամանը (ազդանշանը) ձեր հարևաններին (ենթականերին):
9. Դարանակալման վայրից ետ քաշվել միայն ավագ սպայի հրամանով (ազդանշանով)՝ նախապես սահմանված երթուղիով և խիստ կարգով: Նահանջից առաջ և ընթացքում.
- զենքին կցել լրիվ պահեստատուփ, լիցքավորել զենքը և դնել պահուստակի, հավաքել ծախսված պահեստատուփերը և այլ գույք,
  - հավաքեք հակառակորդի թողած զենքն ու զինամթերքը այնքան, որքան կարող եք տանել,
  - ետ քաշումը իրականացնել արագ (վազելով) և աննկատ,
  - հնարավոր հետապնդումները ժամանակին հայտնաբերելու համար ուշադիր դիտարկեք տարածքը:

### **Դարանակալման օրինակներ.**

#### **Տարբերակ «Ա»**

Դարանակալման օբյեկտը բեռնատար մեքենա՝ թափքում մի քանի մարդ:

Տարվա եղանակը և տեղանքի պայմանները՝ ձմեռ, առանց ձյան ծածկույթի: Դաշտային ճանապարհին անցնում է մի փոքր խորդուբորդ բաց տարածքով, ճանապարհից աջ 0,8-1,2 մ խորությամբ և 3 մ լայնությամբ չորացած ոռոգման ջրանցք: Ջրանցքի հետևում հերկած դաշտ է: Ճանապարհի ձախ կողմում՝ 1,5-2 մ հեռավորությամբ, 1մ խորությամբ և 0,8մ լայնությամբ ձգվում է խոտածածկ խրամուղի: Ճանապարհին անցնում է 1-1,5 մ բարձրությամբ և 6-8 մ ընդհանուր լայնությամբ թմբի

երկայնքով: Ճանապարհից ձախ դատարկ տարածք է՝ բարձր, չոր մոլախոտերով: Ազատ տարածքի հետևում լքված այգի է: Դատարկ տարածության լայնությունը 80 - 100 մ է:

Տեղական ժամանակը՝ 20.30 (մութ, առանց լուսնի գիշեր):

Դարան. անձնակազմը՝ 5-6 հոգի; սպառազինությունը՝ 5,45 մմ AK-74՝ 4 միավոր, 40 մմ ենթափողային նոնականետ ԴՄ-25՝ 1 միավոր, ՔՊԴ-22՝ 1 միավոր:

Ուժերի հարաբերակցությունը՝ 2 (դարան). 1 (օբյեկտ):

10 - 12 մ հեռավորությունից ՔՊԴ-22-ից ճակատային կրակոց արձակվեց 25-30 կմ/ժ արագությամբ ընթացող տենտապատված բեռնատար մեքենայի ուղղությամբ, որն ազդանշան էր կրակ բացելու համար: Առջևից 1-2 վայրկյան ուշացումով 30-40 մետր հեռավորության վրա չորս ինքնաձիգներից կրակ բացվեց մեքենայի ուղղությամբ: Նոնակաձիգը, լուսարձակներից կուրացած, չկարողացավ ճշգրիտ նշանառել և որոշել կրակի բացման պահը՝ հակատանկային նոնակը, առանց մարտական վիճակի բերվելու, խոցեց վարորդի գլխավերևում գտնվող խցիկի «հովհարը» և հարվածից բեկորների տրոհվեց խցիկի ներսում:

Բեռնատարի վարորդը գլխի շոշափող վնասվածք ստանալով բաց թողեց գազի ոտնակը, ինչից հետո բեռնատարը կանգ առավ: Դուրս ցատկելով մեքենայից՝ վարորդը մեքենայի անիվի ճակատային մասի հետևից սկսեց կրակել հարձակվողների ուղղությամբ, այնուհետև վազեց դեպի ճամփեզրի խրամուղի (այնտեղ, որտեղից կրակում էր նոնակաձիգը, ով մինչ այդ հետ էր քաշվել դեպի հողաթումբ):

Աջ կողմի ուղևորը դուրս ցատկելով աջ դռնից առաջինը կրակ բացեց հողաթմբից երևացող չորս հարձակվող ուրվագծերի ուղղությամբ: Այդ պահին հարձակվողներից մեկը հետևից մոտենալով բեռնատարին՝ 8-10 մ հեռավորությունից ՔԴ-5 ձեռքի բեկորային նոնակներ նետեց բեռնատարի թափքի ուղղությամբ: Աջ կողմի ուղևորը նկատեց նետվող նոնակները միայն այն պահին, երբ փոխարինում էր ինքնաձիգի պահեստատուփը:

Փոխելով պահեստատուփը նա կրակ բացեց նոնակ նետողի ուղղությամբ, սակայն, նետված երրորդ նոնակի պայթյունից ձեռքի շրջանում թեթև բեկորային վիրավորում ստանալով, թաքնվեց խրամուղում:

Ամինջապես վարորդի հետևից դուրս ցատկեց և այն ուղևորը, ով պառկելով բեռնատարի առջևի ձախ անիվի հետևում սկսեց կրակել հարձակվողների ուղղությամբ: Նրա ուղղությամբ սկսեցի կրակել ինքնաձիգներից և ենթափողային նոնակա-նետից: Վազելով դեպի խրամուղի՝ նա բազմաթիվ բեկորային վնասվածքներ ստացավ ԲՕԴ-25 նոնակից: Հարձակվող հակառակորդի կրակային ազդեցությունը դադարեց: Ողջ անձնակազմը, միավորվելով խրամուղում, ծածուկ նահանջեց դեպի ամայի տարածք: Հարձակվողները, առանց մեքենան գննելու, շտապ հեռացան մարտի վայրից՝ տարհանելով վիրավորին:

Կրակային մարտի տևողությունը մոտ մեկ րոպե էր:

*Կորուստները.*

- դարանակալված օբյեկտի կողմից՝ մեկ ծանր և երկու թեթև վիրավոր: Բեռնատարը ստանալով բազմաթիվ գնդակային և բեկորային վնասներ իր ուժերով դուրս բերվեց մարտական գործողությունների շրջանից:
- հարձակվողների կողմից՝ մեկը ծանր վիրավոր (ով ձեռքի բեկորային նոնակներ էր նետել բեռնատարի ուղղությամբ):

*Հարձակվողների սխալները.*

1. Անձնակազմը տեղաբաշխված էր «պայտաձև»՝ ճանապարհի երկու կողմերում՝ միմյանցից զգալի հեռավորության վրա: Իսկ անհրաժեշտ էր, որպեսզի բոլորը տեղաբաշխվեին ճանապարհի մի կողմում՝ միմյանցից ոչ ավելի, քան 8 մետր հեռավորության վրա:
2. Ինքնաձիգներից միաժամանակյա համագարկային կրակ չէր բացվել խցիկի ուղղությամբ (այնտեղ ոչ ոք չէր խոցվել):
3. Թմբի ուղղությամբ կրակողներն անհաջող կրակային դիրք էին ընտրել՝ նրանց կերպարանքները գծագրվում էին երկնքի ֆոնին:
4. Նոնակաձիգը ճիշտ չէր ընտրել կրակային դիրքն ու պահը: Նա պետք է կրակեր տենտապատված թափքին՝ բեռնատարի նկատմամբ 45° անկյան տակ (ոչ ճակատային կրակ):
5. Նոնակ նետողը թաքստոցից դուս գալով գործել էր միայնակ: Պետք է գտնվեր չորացած ոռոգման ջրանցքում և այնտեղից (15-20 մետր հեռավորությունից) նոնակները նետեր:
6. Խրամուղում պատսպարված ու հետագայում նախանջած վարորդն ու ուղևորները կրակային ազդեցության չենթարկվեցին:
7. Հարձակվողները մեքենան չստուգեցին, զենքն ու զինամթերքը չհավաքեցին: Բեռնատարը պետք է այրվեր (շարքից հանվեր):

### **Տարբերակ «Բ»**

Դարանակալման օբյեկտը՝ հակառակորդի հետիոտն փոքր խումբ (3 հոգի):

Տարվա եղանակը և տեղանքի պայմանները՝ ամառ: Հարթվայրային, կիսաբաց տարածք, մարգագետնային բուսածածկույթ (խոտածածկը՝ 0,2 - 0,3 մ բարձրությամբ, օշինդրի առանձին թփեր՝ մինչև 0,6 մ բարձրությամբ): Դաշտային ճանապարհն անցնում է խանդակի երկայնքով և կտրում-անցնում է ծանծաղուտը: Խանդակի լայնությունը 40 – 60 մ է, խորությունը՝ 6 – 8 մ: Խանդակով հոսում է առվակ՝ 2–3 մ լայնությամբ և մինչև 0,4 մ խորությամբ: Ճանապարհին ուղղահայաց հակում են օշինդրի երկու թմբեր՝ յուրաքանչյուրը 0,8 մ բարձրությամբ և մինչև 2 մ լայնությամբ: Քայլող մարդու տեսանելիության միջակայքը, երբ դիտարկվում է պառկած դիրքից, 30-60 մ-ից ոչ ավելի է: Հակառակորդի շարժը ճանապարհի երկայնքով հնարավոր է ցանկացած ուղղությամբ:

Օրվա ժամը՝ կեսգիշեր (լուսին, անամպ):

Դարան. անձնակազմը՝ 8 հոգի, սպառազինությունը՝ 5,45 մմ AK-74՝ 6 միավոր, 7,62 մմ PKM՝ 1 միավոր, 7,62 մմ CBՃ՝ 1 միավոր, 40 մմ ԴՊ-25՝ 2 միավոր:

Ուժերի հարաբերակցությունը՝ 2.6 (դարան), 1 (օբյեկտ):

Դիտորդը նկատեց երեք մարդու, ովքեր հայտնվեցին հիմնական դիտակետի ձախ կողմում գտնվող թմբի հետևից: Հակառակորդի հայտնաբերման 25-30 մ հեռավորությունը թույլ չտվեց դիտորդին զգուշացնել խմբի հրամանատարին: Դիտորդը կասկածեց, որ հակառակորդն է իր դիմաց և շշուկով հայտնեց իր կասկածը: Մինչդեռ հակառակորդի միջև հեռավորությունը կրճատվել էր մինչև 10 մ: Շարասյան առաջին զինյալը կանգ առավ՝ նկատելով կասկածելի շարժում դարանի (բլրի վրա գտնվող գնդացրորդ) կողմից, շրջվելով, կամացուկ ինչ-որ բան ասաց իրենից երեք-չորս մետր հեռավորությամբ քայլող ընկերոջը:

Գնդացրորդը իր դիտարկման և հրաձգության հատվածում հայտնաբերեց երկու հոգու, երբ նրանք մոտենում էին ճանապարհին (հեռավորությունը 25-30 մ): Նա նստած դիրքով դիտարկում էր իրականացնում 0,5-0,6 մ բարձրությամբ թմբից:

Առաջին զինյալը նկատեց նրա շարժումը, երբ նա հրաձգության համար պատկած դիրք ընդունեց:

Գնդացրորդն ու առաջին դիտորդը գրեթե միաժամանակ սկսեցին կրակել հակառակորդի ուղղությամբ: Դիտորդը երկար և կարճ կրակահերթերով կրակեց 1,5 պահեստատուփ: Գնդացրորդը կրակեց մեկ երկարատև կրակահերթով (10-15 կրակոց), այնուհետև հակառակորդի հավանական ուղղությամբ մի քանի անգամ:

Երկրորդ դիտորդը կրակեց միայն հակառակորդի պատասխան կրակից հետո՝ համոզվելով, որ դրանք յուրայինները չեն, ծախսեց 18 փամփուշտ:

Դիպուկահարը առանց նշանառման մի քանի կրակոց արձակեց հակառակորդի ուղղությամբ:

Անձնակազմի մնացած մասը չմասնակցեց հակառակորդի կրակային խոցմանը, քանզի «չէին դիտարկել հակառակորդին»: Ընդհանուր առմամբ սպառվեց մոտ 120 փամփուշտ զինամթերք և մեկից ավելի B0F-25:

Մարտի սկզբին ակնթարթորեն ոչնչացվեց զինյալներից մեկը՝ կրծքավանդակի վերին հատվածում 14 գնդակային վիրավորում ստանալով: Երկրորդ զինյալը կարողացավ դիտորդների ուղղությամբ նշանառու կրակ բացել՝ վիրավորելով դիտորդներից մեկին (միջանցիկ վիրավորում պատճառելով նախաբազկի շրջանում), այնուհետև դարանի ուղղությամբ 2-3 կարճ և աննպատակ կրակահերթ արձակելով՝ անհետացավ թմբի հետևում:

Գլխամասային դետքին հետևող 12 գրոհայիններից բաղկացած խումբը դիմադրություն չցուցաբերեց և աննկատ հետ քաշվեց՝ տարհանելով վիրավորին:

Կրակային մարտի տևողությունը 35-50 վայրկյան էր:

*Կորուստները.*

- հարձակվողներից՝ մեկ վիրավոր,
- դարանակալված օբյեկտի կողմից՝ մեկ սպանված և մեկ վիրավոր

Չավթվեց՝ AK-74 ենթափողային ԴՄ-25-ով և դրա համար նախատեսված զինամթերքը, ՈՒԿԱ ռադիոկայան «Kenwood»-ը և հատուկ կարևորություն ունեցող փաստաթղթերը:

*Հարձակվողների սխալները.*

- խմբի անձնակազմի կեսը քնած էր,
- թմբի վրա նստած գնդացրորդի կերպարանքը հստակորեն գծագրվում էր երկնքի ֆոնին,
- հակառակորդի կրակային խոցմանը մասնակցում էին ընդամենը չորս զինձառայողներ, որոնցից միայն երկուսն էին ակտիվ: Միաժամանակյա դաշունային կրակ չի բացվել,
- չկիրառվեցին ձեռքի բեկորային և B0F-25 նռնակները, այդ թվում՝ հակառակորդի հավանական նահանջի երթուղիում,
- ժամանակին չգննվեց զինյալի և բախման վայրի մերձակայքում հակառակորդի թողած առարկաները (ոչնչացված զինյալի մատը դրված էր պահունակից հանված ԴՄ-25-տիպի ենթափողային նռնականետով AK-74 ինստիգրի ձգանին, փամփուշտը փամփշտակալում, նռնակը փողում...):

Ընդհանուր առմամբ, հիմնական սխալներն էին.

- գիշերային ժամերին դիրքի սխալ ընտրությունը՝ հարձակվողների կերպարանքները հստակորեն գծագրվում էին երկնքի ֆոնին;

- հարձակվողներն առկա զենքերից (հատկապես ԴՊ-25) միաժամանակյա կրակ չէին բացում դարանակաված թիրախների ուղղությամբ,
- հակառակորդի հավանական նահանջի ուղիներում նահանջողների վրա կրակային ազդեցություն չէր գործադրվում,
- հակառակորդի դիակները կամ նրանց թողած տեխնիկան ժամանակին զննության չէր ենթարկվում:

Կրկին անգամ շեշտենք՝ անհրաժեշտ է ունենալ մարտավարական պատրաստվածություն և ներդաշնակ գործող թիմ (մարտական խումբ), մարտում միմյանց հետ շփվել նշաններով և իրար հասկանալ, ինչպես ասում են «կես խոսքից»:

Աղբյուրը: [https://vk.com/@unfair\\_advantage-zasada-silami-maloi-gruppy](https://vk.com/@unfair_advantage-zasada-silami-maloi-gruppy)